# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.04.2021թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ**
**թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/21**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար Վանաձոր համայնքի Գր. Լուսավորիչ - Մ. Խորենացի խաչմերուկում լուսացույցի տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-21/51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի կողմից 08.04.2021թ. ներկայացված և 08.04.2021թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/21 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

**1. <u>«Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ն (հետայսու՝ Ընկերություն) 08.04.2021թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-21/51» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի 2021 թվականի «ապրիլի» «02» «1» որոշմամբ հայտարարվել է հրավեր (այսուհետև՝ Հրավեր)՝ «Վանաձոր համայնքի Գր. Լուսավորիչ - Մ. Խորենացի խաչմերուկում լուսացույցի տեղադրման աշխատանքներ ձեռքբերման նպատակով: Գտնում ենք, որ մրցույթի

հրավերում նշված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում գնումները կարգավորող օրենսդրության պահանջներին, այդպիսի տեխնիկական սահմանափակվում է այլ հնարավոր մասնակիցների մասնակցությունը մրցույթին և որի հետևանքով կարող են խախտվել անձանց ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված իրավունքները, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Հրավերի N1 Հավելվածում տրված «տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույց»- ում նշված է՝

1. Լուսաֆորի հաճախականությունը 50/60 հերց: Նկատի ունենալով, որ Հայաստանում 50 հերց հաճախականությունից բացի չկա այլ կիրառում, անհասկանալի է նշված ձևակերպումը՝ պարտադիր պահանջ է նշված երկու հաճախականությունների հնարավորությունը, թե նշվածը թույլատրելի միջակայք է:

2. Արտաքին տեսքը պետք է լինի նույնը, ինչ-որ տրված է գծագրում: Հղում կատարելով գծագրին, որում տրված է տեղադրման ենթակա սարքավորումների գծապատկերները, ինչն ըստ էության հանդիսանում է սարքավորման էսքիզը, թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջի խախտում:

Նշվածի համատեքստում անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ օրինակ՝ գծագրում ներկայացված հետիոտնային լուսացույցը, ըստ տրված չափանիշների կարող է արտադրվել եզակի ընկերությունների կողմից: Հաշվի առնելով, որ տեխնիկական բնութագրում որևէ հղում չի կատարվել միջազգային ստանդարտների կամ Հայաստանում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, առնվազն հիմնավոր չէ, թե ինչու է պարտադրվում հենց այդ չափորոշիչները և ինչու ներկայացված չէ գծագրում տրված չափորոշիչներից թույլատրելի շեղումները՝ նկատի ունենալով, որ Հայաստանում առավելապես գործում են պահանջվողից տարբերվող բնութագրով լուսացույցեր:

Տեխնիկական բնութագրի նման ձևակերպումը և դրանում տրված պարտադիր պահանջները, որոնք մասամբ ուղղակի են հակասում Օրենքի պահանջներին, մասամբ չեն բխում իրավական և/կամ օբյեկտիվ անհրաժեշտության պահանջներից, ուղղակի սահմանափակում են հնարավոր մասնակիցների մրցույթին մասնակցելու հնարավորությունները, որպիսին օրինակ կարող է հանդիսանալ մեր ընկերությունը, արդյունքում խախտելով Օրենքով սահմանված սկզբունքները և շեղվելով գործընթացի բուն նպատակից:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնի պահանջները խնդրում ենք՝

1. Պարտավորեցնել Պատվիրատուին նոր որոշում, այն է՝ փոխել թիվ 2021 թվականի «ապրիլի» «02» «I» որոշմամբ «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-21/51» ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի կողմից հաստատված տեխնիկական բնութագիրը՝ վերացնելով սույն բողոքում նշված թերությունները,

2. Կամ չկայացած հայտարարել «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-21/51» ծածկագրով հայտարարված մրցույթի գնման ընթացակարգը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.04.2021թ. ժամը 09:40-ին և 19.04.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**2.Վանաձորի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.**

Վանաձորի համայնքապետարանը (հետայսու՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 13.04.2021թ. թիվ 01-4591 գրությամբ ներկայացրել է բողոքին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 14.04.2021թ. ժամը 09:40-ին և 19.04.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/21 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

ԳԲՔԱ-ՆԳ-2021/21 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար Վանաձոր համայնքի Գր. Լուսավորիչ - Մ. Խորենացի խաչմերուկում լուսացույցի տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-21/51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի N 1 հավելվածով սահմանվել է Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցը (հետայսու՝ Տեխնիկական բնութագիր)*:*

**4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը, Վանաձորի համայնքապետարանի 13.04.2021թ. թիվ 01-4591 գրությունը, «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-21/51» ծածկագրով ընթացակարգի հրավերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. ***Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող*** ապրանքի, ***աշխատանքի*** կամ ծառայության ***հատկանիշները***, դրանց

ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. ***<u>Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:</u>***

5. ***Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ*** առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, ***էսքիզին*** կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, ***<u>բացառությամբ այն դեպքերի,</u> երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց***: Հղումներ

օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Այսպիսով՝ Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար Վանաձոր համայնքի Գր. Լուսավորիչ - Մ. Խորենացի խաչմերուկում լուսացույցի տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-21/51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով, սահմանվել է հետևյալը.

*«Վանաձոր համայնքի Գր.Լուսավորիչ-Մ.Խորենացի խաչմերուկում լուսացույցի տեղադրման աշխատանքներ, այն է.*

*Լուսացույցի ձեռքբերում՝լուսացույցի բնութագիր՝ Լուսաֆորի տրամագիծը-300մմ, 100-240 Վոլտ, հաճախականությունը - **50/60 Հերց**, աշխատում է - 40oC +75oC ջերմաստիճանում,հետհաշվարկով:*

*Հետիոտնային լուսացույց-տրամագիծը 300մմ, 100-240Վոլտ, հաճախականությունը-* ***50/60Հերց:***

*Բաղկացուցիչ մասեր՝- սև պլաստիկ կաղապար՝ABS նյութից,պաշտպանիչ ծածկ յուրաքանչյուր հատիկ լուսարձակի համար(չափսերտ տես գծագրում) ապակի,թվային ժամանակացույց՝ հետ հաշվարկով:*

*/ Գծագիրը կցվում է/*

*Արտաքին տեսքը պետք է լինի նույնը ինչ-որ տրված է գծագրում: Աշխատանքը ամբողջությամբ (ձեռք բերում և տեղադրում) պետք է կատարվի Կատարողի կողմից:*

*Տեղադրման աշխատանքներ*

*3-րդ կարգի բնահողի ձեռքով քանդում մետաղական սյուների տեղադրման համար - 4.00 մ3*

*3-րդ կարգի բնահողի հետլիցք ձեռքով - 0.53 մ3*

*Ավելորդ բնահողի փոում տեղում ձեռքով - 3.50 մ3*

*Մետաղական խողովակից սյուների տեղադրում Φ80,Φ100 - 0.230 տն*

*Մետաղական խողովակΦ80Χ4/L=3.6մ,8 հատ/ - 28.80 մ*

*Ամրան Φ12A500c – 0.011 տն*

*Պողպ. Թերթ. b=10մմ – 0.039 տն*

*Մետաղական սյուների յուղաներկում 2 անգամ – 6.10 մ2*

*Մետաղական սյուների բետոնե հիմքի կառուցում Վ7.5 - 3.500մ3*

*Լուսացույցների տեղադրում և ծրագրավորում – 16.00 լրակազմ*

*ՈՒԿ –ի տեղադրում – 1 հատ*

*Տրանսպորտային, լուսադիոդային, հետհաշվարկային ժամացույցով լուսացույց300մմ – 8.00 լրակազմ*

*Հետիոտնային, լուսադիոդային, հետհաշվարկային ժամացույցով լուսացույց300մմ – 8.00 լրակազմ:*

*Վանաձոր համայնքի Գր. Լուսավորիչ-Մ.Խորենացի խաչմերուկում լուսացույցի տեղադրման համար լիցենզիայի առկայությունը պարտադիր չէ:*

*Աշխատանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում 365 օր:*

*Աշխատանքներն իրականացվելու են անհրաժեշտ բանվորական արտահագուստով՝ պահպանելով անվտանգության կանոնները»:*

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ն բողոքով մասնավորապես հայտնել է հետևյալը. «*Տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանվել է, որ լուսացույցի հաճախականությունը 50/60 հերց է: Հայաստանում 50 հերց հաճախականությունից բացի չկա այլ կիրառում, անհասկանալի է նշված ձևակերպումը՝ պարտադիր պահանջ է նշված երկու հաճախականությունների հնարավորությունը, թե նշվածը թույլատրելի միջակայք է»:*

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ գնման առարկայի ***բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող*** ապրանքի, ***աշխատանքի*** կամ ծառայության ***հատկանիշները:***

Նույն հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ ***<u>գնման առարկայի հատկանիշները</u>*** կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք ***<u>պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:</u>***

Այսպիսով՝ գնման առարկայի տեխնիկական բնութագրի սահմանմանն ուղղված պարտադիր պահանջների վերլուծությունը ցույց է տալիս, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Միաժամանակ պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝

հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Ուսումնասիրելով բողոքով վիճարկվող մասով Ընթացակարգի հրավերի Տեխնիկական բնութագրով սահմանված գնման առարկայի հետևյալ պահանջը. «Լուսացույցի հաճախականությունը 50/60 հերց»՝ գտնում եմ, որ Պատվիրատուն, Ընթացակարգի հրավերով նախատեսելով գնման առարկայի նման պահանջ՝ առանց հստակ նկարագրելու նշված «50/60 հերց» երկու հաճախականությունների հնարավորությունը պարտադիր պահանջ է, թե միայն մեկի հնարավորությունը բավարար է, առաջացրել է տարակերպ մեկնաբանության հնարավորություն, որն իր հերթին հանգեցրել է Օրենքի վերոհիշյալ նորմերով սահմանված տեխնիկական բնութագրի կազմմանը ներկայացվող պահանջների խախտմանը:

Ինչ վերաբերում է բողոքաբերի հետևյալ դիտարկմանը. «*Հայաստանում 50 հերց հաճախականությունից բացի չկա այլ կիրառում*», ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝..... բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունն իրականացնում է բողոքով ներկայացված ապացույցների հիման վրա, ընդ որում, բողոք ներկայացնելով, շահագրգիռ անձն է կրում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմանվորումներ ներկայացնելու պարտականությունը: Ընդ որում՝ օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու միայն բողոքի հետ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու և/կամ փոփոխելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները գործի քննության ընթացքում:

Մինչդեռ արձանագրում եմ, որ «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ն, օգտվելով իրեն Օրենքի 46-րդ հոդվածի դրույթներով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոք, սակայն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի ներկայացրել իր կողմից բողոքով վկայակոչված փաստին, այն է՝ «*Հայաստանում 50 հերց հաճախականությունից բացի չկա այլ կիրառում*», որևէ վերաբերելի ապացույց: Ընդ որում՝

այդպիսի հնարավորություն Ընկերությունը ունեցել է, թե՛ բողոքը ներկայացնելու և թե՛ բողոքի քննության ընթացքում՝ մինչև գործի ելքով որոշում կայացնելը:

Այսպիսով՝ փաստերը, որոնք օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից վկայակոչված հետևյալ դիտարկմանը. *«Պատվիրատուն Տեխնիկական բնութագրում նշելով, որ արտաքին տեսքը պետք է լինի նույնը, ինչ-որ տրված է գծագրում»: Հղում կատարելով գծագրին, որում տրված է տեղադրման ենթակա սարքավորումների գծապատկերները, ինչն ըստ էության հանդիսանում է սարքավորման էսքիզը, թույլ է տրվել Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջի խախտում»*, ապա սույն մասով արձանագրում եմ հետևյալը.

Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ***գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ*** առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, ***էսքիզին*** կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, ***<u>բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց:</u>*** Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ էսքիզին հղում անելը թույլատրվում է, եթե անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց:

Սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին, և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը:

Վերը նշված կարգավորումները համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ գտնում եմ, որ բողոքը սույն մասով ևս անհիմն է:

Վերոգրյալ փաստերով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ընկերության բողոքը ենթակա է բավարարման մասնակի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

# Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ի կողմից 08.04.2021թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի, մասնավորապես.

Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին սույն որոշման հիմնավորման շրջանակներում փոփոխություն կատարել Ընթացակարգի հրավերի Տեխնիկական բնութագրում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**